ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

10-ը դեկտեմբերի 2024թ.

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առիթով

1948թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը. այս օրն ամբողջ աշխարհում նշվում է որպես Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր: Յուրաքանչյուր մարդ ունի օրենքով սահմանված հիմնարար իրավունքներ ու ազատություններ, որոնց առաջին պաշտպանը պետությունն է և համապատասխան մարմինները, միևնույն ժամանակ յուրաքանչյուր իրավագիտակից քաղաքացի ու արդարամիտ կառույց ամենօրյա անկողմնակալ գործունեությամբ ուրույն դեր ունեն մարդու իրավունքների իրագեկման ու պաշտպանության կարևոր հարցում:

Իմ անմիջական ուշադրությամբ այս սկզբունքով է աշխատում Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմը, որտեղ լսելի են բնակիչների բարձրաձայնած հարցերը, ուշադրության կենտրոնում են խոցելի խմբերում հայտնված քաղաքացիների խնդիրները: Ամենատարբեր կազմակերպությունների, հիմնադրամների հետ համագործակցությամբ համայնքապետարանը բազմիցս իրականացնում է տեղահանված արցախցիներին առնչվող իրազեկման, աջակցությունների տրամադրման աշխատանքներ. կարևորելով իրավահավասար պայմանների ստեղծումը՝ համայնքապետարանը նպաստում է հաշմանդամ անձանց մշակութային և սպորտային միջոցառումների անցկացմանը, կազմակերպում երեխաների իրավունքների իրազեկման արշավներ և մասնակցում ոլորտին առնչվող ամենատարբեր ծրագրերի:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առիթով ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս, լիահույս եմ, որ համատեղ ուժերով կհասնենք իրավագիտակից հանրության, հանդուրժող ու հոգատար հասարակության ձևավորմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ